ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 21 » հուլիսի 2020թ. №34-Ա

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 23-րդ մասի 5-րդ կետի «գ» ենթակետի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ագարակի համայնքային կենտրոնի շենքի ճակատային մասի և առաջին հարկի կապիտալ նորոգման աշխատանքներիը արդեն սկսվել են, իսկ դրանց տեխնիկական հսկողության աշխատանքների մրցույթը երկու անգամ չկայացած է համարվում հայտեր չլինելու պատճառով.

համայնքի ավագանին որոշում է.

1.Գնման հրատապության հիմքով պայմանավորված՝ Ագարակի համայնքային կենտրոնի շենքի ճակատային մասի և առաջին հարկի կապիտալ նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության աշխատանքների գնումը կատարել մեկ անձից գնման ընթացակարգով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Խալաթյան Ավետիք Հարությունի			
Մարտիրոսյան Հուսիկ Հենրիկի			
Մուրադյան Կարեն Ցոլակի			
Շահնազարյան Թամարա Էդիկի			
Չատինյան Կարեն Հրաչիկի			
Պապյան Հարություն Միշիկի.			
Սախլյան Էդգար Ռոբերտի			
Վարդանյան Մելանյա Գեորգիի			

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2020թ. հուլիսի 21

գ. Լոռի Բերդ